

գրէ թէ Բեթղեհէմի այրին պատէն առաջին անգամ ջուր վաղած է Քրիստոսի ծնունդէն յետոյ, մարմնոյն առաջին լուացման համար: Նոյն ջուրը վաղած է պատէն այն ամանին մէջ ուր լուացումը կատարուած է(*): Այս նուիրական լուացումին ջուրը ստորե գրտնուած ժայռին մէջ շինած է ընդունարան մը, ուրկէ դուրս կ'ելլէ բնական փորուածքի մը միջոցաւ: Մինչեւ այսօր ցոյց կը տրուի տեականապէս մաքուր ջուրով լեցուած խոռոչը: Մեր Փրկիչը իր ծննդեան օրէն ի վեր այս ջուրը կը բղխեցնէ անապատի կարծր ժայռէն՝ հակառակ բնութեան, մխիթարելու համար իր ծարաւի ժողովուրդը: Այս ջուրին համար մարգարէն կ'երգէ. «հանցէ ջուր ի վիմէ» (Եւ. ԽԸ. 21) և Պօղոս առաքեալ կը գրէ. «Եւ վէմն էր ինքն Քրիստոս» (Ա. Կորնթ. Ժ. 4): «Քրիստոս է Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն» (Ա. Կորնթ. Ա. 24), որ կը պահպանէ Բեթղեհէմի ժայռը և անոր խոռոչը միշտ ջուրով լեցուն է: Այս պարագան տեսած է Արդուլֆ և Նոյն ջուրով լուացած իր աչքերը (E. T. P. էջ 6):

բ) Քրիստոսի ծննդեան ժամանակ այրին մեջ եղան եւ իշուն աւանդոքիւնը. — Քրիստոսի մանկութեան անվաւեր աւետարանը (ԺԴ.) կը գրէ «թէ Տիրոջ ծննդն

(*) Անվաւեր տեսարաններէն առնուած է Յիսուս մանուկի աւազանի աւանդութիւնը: Աւերեալ եկեղեցիի մը սակէն զտնուած է զարդարուն խոյակ մը եւ պահուած է Երուսաղէմի քանդաւաններէն մէկուն մէջ. անոր առաջին երեսին վրայ բանդակուած է Յիսուս մանուկի աւազանին պատկերը: Երկու մանկաբարձ կիներ՝ որոնց սրունքները կ'երեսան եւ ձեռքերին կը զուեակուի, մանուկը կը բռնեն կիսաբոլորակ swesh մը վրայ՝ որ ցցուակներով (moulure) զարդարուած սնաբունի (fût) վրայ դրուած է (Enl. Բ. էջ 198):